

## ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՎ ՇԱԿՈԲՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու

# ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԴԱՐԱՆՁԻ ՄԱՍԻՆ

Քաղաքական ու տնտեսական ծանր պայմանների հետևանքով շատ ժողովուրդներ՝ հովաները, հրեաները, աստիճաները և հիմքեր, հայերը, ստիպված են եղել թողնել հայրենիքը և զաղթել օտար ափեր: Հայերը սակայն, նոր ապատանած երկրներում կենականութեան կապված են մնացել ազգային մշակույթի ու հավասի հետ: Թերևս դժվար է գտնել մեկ այլ ժողովուրդ, որը հայի նման իր մայր երկրից դորս՝ զաղթավայրերում Կ. Պոլիս, Ղրիմ, Նոր Ջուղա, Նոր Նախիջևան, Լվով, ստեղծած լինի արվեստի նման բարձրարժեք և խորապես ազգային գործեր: Հայ մարդու կողմից որքան ձեռագիր-մատյաններ են ստեղծվել աշխարհի ամենահետապնդ անկյուններում:

Նման մի հետաքրքրական երևույթ կատարվել է պատմական Հայաստանի արևմտյան սահմաններից այն կողմ Փոքր Ասիայի բարձրադիր մասում, Տավրոս լեռան ու Եփրատ գետի շրջաններում:

Հայերն այստեղ վաղուց են բնակություն հաստատել<sup>1</sup>: Տեղեկություններ կան, որ դեռևս IV-V դարերում, պարսիկների հետ ընդհարումների հետևանքով, հայ իշխանական տների որոշ ներկայացուցիչներ անցել են Կապադովկիա: Մովսես Խորենացին Կապադովկիան անգամ համարում է Հայոց երկրի արևմտյան մասը<sup>2</sup>:

Կապադովկիայում հայերի թիվը մեծացավ հատկապես XI դ. կեսերից, սեղուկյան արշավանքների շրջանում: Սեղուկյան նվաճումներից առաջ էլ բյուզանդացիները տարբեր միջոցներով տիրացել էին Հայաստանի հարավային տարածքներին:

Կապադովկիայի կապակցությամբ հետաքրքրական է պատմիչ Միքայել Ասորու հետևյալ տողերը. «Հայերը բազմացան այս կողմերը (XI դ.) և անկից է, որ տարածուեցան բոլոր Կապադովկիա, Կիլիկիա և Ասորիք»<sup>3</sup>: Նման տեղեկություններ հանդիպում են նաև հայկական մի շարք աղբյուրներում<sup>4</sup>:

Խաչակիրների պատմիչները Կապադովկիայի հայաբնակ վայրերը դեռ այն ժամանակ կոչել են հայկական երկիր<sup>5</sup>:

<sup>1</sup> Նիկողայոս Աղոնց, Հայաստանը Հոստիմիանոսի դարաշրջանում, Երևան, 1987թ., էջ 80-89, 388-389, 439 և այլն:

<sup>2</sup> Մովսես Խորենացի, Պատմություն Բայց, Գիրք Ա, Գ.1. Ժ.1:

<sup>3</sup> Տե՛ս Ա. Ալպյոյանան, Պատմութիւն Բայց Կեսարիոյ, Կաթիռն, 1937, էջ 338:

<sup>4</sup> Թովմա Արծրունի, Արհստակես Լաստիվերտցի, Մատքես Ուռնալեցի, Սամուել Անեցի և ուրիշներ:

<sup>5</sup> Տե՛ս G. de Jerphanion, *Une nouvelle province de l'art Byzantin, les églises rupestres de Cappadoce*, Paris, II, 1932, p. 398 (ծ. 3).

«Վեց հարիւր տարիների ընթացքում, որ Կապադովկիա կը մնար Բիւզանդական կայսերութեան տիրապետութեան տակ, – գորում է Ս. Ալպոյանցանը, – շարունակ պետութիւնը կը լցուէր հայերով, որոնցմէ ստուար մաս մըն ալ ապահովաբար բաժին կիւնար Կապադովկիոյ, որուն մէկ կարևոր մասը արդեն Փոքր Հայքի սահմաններուն մէջ մտած էր հոռմէական տիրապետութեան շրջանին հայ բնակչութեան թվին աճումին պատճառով»<sup>6</sup>:

Մաղաքիա արքեպոս. Օրմանյանը «Ազգապատում» կոթողային աշխատության մեջ ներկայացնում է Հայոց Եկեղեցու Կապադովկիայի թեմի գործունեությունը<sup>7</sup>:

Ի. Դյակոնովը կապադովկյան լեզուն համարել է «պրոտոհայկական»<sup>8</sup>: Հովսն գիտնական Պ. Կարողիդեսը կապադովկյան շատ բառերի և արտահայտությունների ծագումը կապում է հայերի հետ<sup>9</sup>:

Ինչպես տեսնում ենք, գրականության մեջ բազմաթիվ փաստեր կամ՝ կապված կապադովկիայում ապրող հայերի, նրանց կյանքի ու կենցաղի մասին: Զարմանալիորեն, սակայն, որևէ հայ հեղինակի առանձին մի հոդված գոյություն չունի Կապադովկիայում ապրող հայերի ստեղծած արվեստի մասին: Դրան վերաբերող աղքատիկ տեղեկությունները ստիպված ենք քաղել օտար հեղինակների աշխատություններից: Ի դեպ, ազգային մշակույթի հուշարձանների հետ կապված օման վիճակը բացառություն չէ: Այդպես եղել է նաև Հայաստանի տարածքում. օրինակ՝ Վասպուրականի Վարագա վանքի Ս. Գևորգ ժամատան որմնամնարմերի մասին հանգամանորեն խոսել է միայն ֆրանսիացի Մ'իշել Թիերի<sup>10</sup>: Նովսն հեղինակի շանքերի շնորհիվ առաջին ամգամ տեղեկացանք Վասպուրականի Կապուտկոյ լեռան բարձրադիր լանջում գտնվող Ս. Հակոբ եկեղեցու ընտիր որմնամնարմերի մասին<sup>11</sup>:



Վիլամեն եկեղեցու արևմտյան թևը և նարտեքը

<sup>6</sup> Ս. Ալպոյաննեան, Պատմութիւն հայ կեսարիոյ, Լաթիրն, 1937, էջ 334:

<sup>7</sup> «Ազգապատում», Կ. Պոլիս, 1912, էջ 101:

<sup>8</sup> История армянского народа, Ереван, 1968, стр. 222.


<sup>9</sup> Հ. Բարթիկյան, Կոստանդնուպոլիս Միաբանության պատմությունը Հայաստանի և հայերի մասին, Բ. Երևան, 1970, էջ 171-172:

<sup>10</sup> M. Thierry, Monastères Armenies du Vaspourakan le convent de Varagavank, "Re. Arm.", t. VI, Paris, 1970, p. 150-161.

<sup>11</sup> Revue des Etudes Armeniennes, I. V, Paris, 1968, p. 65-79: Այս եկեղեցին կառուցել և նկարազարդել է տվել Վասպուրականի վերջին թագավոր Սենեքերիմը: Եկեղեցու պատերից մեկի վոր նկարված է Սենեքերիմ թագավորը՝ իր շքախմբի ամդամների հետ:

Ուրեմն նույն վիճակն է եղել Կապադովկիայի X-XI դր. հայկական եկեղեցիների և դրանց որմնանկարների պարագայում: Վերջիններիս մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում եվրոպացի գիտնականներ Գ. դը Ժերֆանիոնը, Հ. Ռոտ Ռոտստեն, Ն. և Մ. Թիերի-Եերը, Ժ. Լաֆոնտեն-Ռոզոնը և այլք:

Առաջին անգամ այս մասին հրապարակումներ եղել են XX դ. սկզբին, երբ Գեզզի բնակավայրի մոտի քարանձավում գտնվող Սուրբ Կարապետ հայկական եկեղեցին հայտնաբերել և ուսումնասիրել է գերմանացի գիտնական Հելմուտ Ռոտստը<sup>12</sup>:



Աղոյի-Աղթի եկեղեցու գմբեթի որմնանկարները

Հ. Ռոտստից հետո Կապադովկիայի հայկական եկեղեցիներին և դրանց արվեստին անդրադարձել է ֆրանսիացի գիտնական Գ. Ժերֆանիոնը: Իր եռահատոր աշխատության մեջ, տարբեր առիթներով, նա խոսում է այդ վայրերում հայերի մշակութային գործունեության մասին. «Լիկանդոս և Ծամնավ քաղաքներում վաղուց ի վեր հաստատվել էր Բարձր Հայքից եկած բնակչության մի հատված՝ Մլեհ (Մելիոս) հայի զլիավարությամբ: Նը-

րաճը քանակաթեմեր ունեին և եռամդուն մասնակցություն էին ունենում տեղական կյանքին: Նրաճը որոշակի դեր խաղացին այդ քաղաքների վերակառուցման գործում. իսկ եկեղեցիների ներսում գտնվող որմնանկարների հունական արձանագրություններն այնքան անկանոն ու սխալներով են գրված, որ դրանց մեջինակների ոչ հուն լինելը կասկած չի հարուցում»<sup>13</sup>: Գ. Ժերֆանիոնն ավելի որոշակիորեն է գրում հատկապես Սպիտակ եկեղեցի անվանված եկեղեցու կապակցությամբ. «Նրա գմբեթի ու ներսի դեկորատիվ զարդարադրամքի ոճաճնաբանական առանձնահատկություններում դրսկորում է հայկական ոճը»<sup>14</sup>:

Հաջորդ գիտնականը, որն ավելի հանգամանորեն է գրում Կապադովկիայի հայկական եկեղեցիների արվեստի մասին, Ժակլին Լաֆոնտեն-Ռոզոնն է: Դեռևս 1963 թ. իր «Նոր տեղեկություններ Կապադովկիայի մասին» հոդվածում<sup>15</sup> նա անդրադառնում է Կապադովկիայի հայկական արվեստի հարցերին՝ խոսք մասնավորելով եկեղեցիներից մեկում

<sup>12</sup> H. Rott, *Kleinasiatische dankmäler aus Pisiden. Pamphylien, Kappadokien und Lydien*, Leipzig, 1908, p. 200.

<sup>13</sup> Գ. դը Ժերֆանիոն, Ջշվ. աշխ., Բատոր IV, 1942, էջ 398-400 (Կապադովկիայի հայերը գրել են Բումարեն, որի պատճենով և՛ սխալներով. մի բան, որմ իր արտամալությունն է գտել որմնանկարներում):

<sup>14</sup> Գ. դը Ժերֆանիոն, Ջշվ. աշխ., Բատոր IV, 1942, էջ 417:

<sup>15</sup> J. Lafontaine-Dosogne, *Nouvelles notes Cappadoziennes* (Extrait de «Byzantion»), m. XXXIII, Bruxelles, p.p. 121-183.

հայ Մլեհ գորավարի պատկերի շուրջ: Նա գտնում է, որ այդ պատկերը կատարված պեսք է լինի հայ վարպետների կողմից X դ. 60-ական թվականներին<sup>16</sup>:

Իր վարկածը հավաստելու համար բեկիացի գիտնականը կատարողական-ոճական մանրազնին համեմատություններ է անցկացնում նույն ժամանակաշրջանի հայկական մանրամակարչության նմուշների հետ՝ մասնավորապես Ակատի ունենալով հայոց Գագիկ թագավորի «Կարսի» կոչվող Ավետարանի կերպարները:

Ժ. Լաֆոնտեն-Դոգոնը ևս, ինչպես Հ. Ռոտտը, որոշ տեղեկություններ է հաղորդում Գեղջի քարանձավում գտնվող հայկական Ս. Կարապետ եկեղեցու մասին<sup>17</sup>:

Այդ նույն հոդվածում Ժ. Լաֆոնտեն-Դոգոնը հայկական ճարտարապետության և հայ արվեստի հետ է առնչում Կապադովկիայի Փյուրենե Սենիի, Դանիելի, Վիլանլե և Կոկարե եկեղեցիները: Հատ գիտնականի, այդ եկեղեցիների գեղարվեստական հարդարանքը որոշակիորեն կրում է հայկական արվեստի կմիջը<sup>18</sup>:

1973 թ. Մուկվայում լույս ընծայված «Բյուզանդիա, Հարավային Արևոտյան Եվրոպա. արվեստը և մշակույթը» ժողովածուում Ժ. Լաֆոնտեն-Դոգոնը հանդես է եկեղեցական ուշագրավ հոդվածով՝ «Զեմելկչի քեկիսե կոչվող եկեղեցու որմնանկարները և հայերի ներկայության խնդիրը Կապադովկիայում»:

Հետաքրքրական ու դիպուկ վերլուծությունների շնորհիվ փորձառու գիտնականն ընթերցողին համոզում է այդ եկեղեցու որմնանկարների հայկական պատկանելիությունը: «Այդ եկեղեցու որմնանկարները, – գրում է Բեղյանակը, – դրանուրում են որոշակի կապեր ոչ միայն Կապադովկիայի մի շարք վանքերի գեղամակարչության հետ, որոնք վերագրվում են հայերին և կամ առանձնանում հայկական ազդեցությամբ, այլ նաև՝ հայկական այն ձեռագրերի մանրամակարների հետ, որոնց են ծանոթացած Երևանի Մատենադարանում»<sup>19</sup>:



«Ավետում շրինորի մոտ» (Փյուրենե Սենի) եկեղեցի

<sup>16</sup> Մլեհ գորավարն այստեղ ներկայացված է բյուզանդական կայսերի դիմանկարների կողքին բյուզանդական հագուստներով:

<sup>17</sup> Ցավոք, այդ եկեղեցու որմնանկարներից այսօր մնացել են միայն առանձին բնկորներ:

<sup>18</sup> Ժ. Լաֆոնտեն-Դոգոն, Աշխատություն, էջ 171-172:

<sup>19</sup> Եվզապիա, Յօհանոս Շլայման և Արքայա Ռուս, Հայութայ Եվրոպա. Խոստություն (հայություն), Մ., 1973, սու 78.

Եվրոպացի վերջին մեղմակները, որոնք լուրջ ներդրում կատարեցին Կապառվկիայի ժայռափոր եկեղեցիների որմնանկարչության հետազոտման գործում, ֆրանսիացի Նիկոլա և Միշել Թիերի ամսահնաները են: 1963 թ. Փարիզում նրանք լույս ընծայեցին «Կապառվկիայի վիմափոր նոր եկեղեցիները» ստվարածավալ աշխատությունը<sup>20</sup>, ինչպես նաև արժեքավոր հոդվածներ «Revue des Etudes Byzantines» հանդեսում<sup>21</sup>: Թիերիների գործում կարևոր է հատկապես այն, որ, մատնանշելով Կապառվկիայի հետ հայերի ունեցած կապերը և հայ արվեստի առնչությունները, նրանք գտնում են, որ Կապառվկիայի հայկական եկեղեցիների նկարչությունը միատարր չէ. ընդհանուր կողմերով հանդերձ, դրանք սահմանազատվում են ոճապատկերագրական երկու խմբի: Հնամեննի խմբի մեջ մտնող որմնանկարներն իրենց պարզ ձևերով ու անմիջական տպավորությամբ, նաև ունկորատիվ տարրերի օգտագործման հարստությամբ, ավելի հոգեհարազատ են արվեստի ժողովրդական ուղղությանը: Հետաքրքրական է, որ նույն ժամանակաշրջանի հայկական որմնանկարչության կապակցությամբ նման միտք արտահայտել է միջնադարյան գեղանկարչության քաջ գիտակ արվեստաբան Ն. Քորանչյանը<sup>22</sup>:

Մի կարևոր հանգամանք ևս. ոճական ընդհանություններից զատ, վերոհիշյալ մասնագետները մատնանշում են պատկերագրական որոշակի աղեքսներ ու ընդհանություններ Կապառվկիայի և Հայաստանի միջնադարյան մատենական մանրանկարչական գործերի միջև: Մասնավորապես հիշատակելով «Աբրահամի գոհաբերությունը», «Ծնունդը», «Խորհրդավոր ընթրիթը», «Մատնությունը», իսկ Մոզաց թագավորների կապակցությամբ Գ. Ժերֆամինը և Ժ. Լաֆոնտեն-Դողոնը որոշակիորեն նշում են, որ որմնանկարներում հիշյալ թագավորների մոտ հիշված անունները՝ Մելքոն, Գասպար և Բաղդասար, զուտ հայկական անվանում և արտասանություն ունեն և, որպես այդպիսին, համեյառում են միայն Քրիստոսի Տղայության Ավետարանի հայկական խմբագրության մեջ (գլուխ XI, I): Լաֆոնտեն-Դողոնը վերօհիշյալ որմնանկարներում համեյառող մի դրվագ ևս կապում է հայկական արվեստի հետ. «Ծննդյան» հորինվածքում գտնվող Հովսեսի, որը նատած է թիկունքով դեպի ծննդաղը, համարվում է հայկական տարրերակ: Նման մի դրվագ մատնանշում է նաև նավազող հովիվների կապակցությամբ:

Բացի այդ, Լաֆոնտեն-Դողոնը նկատել է, որ կապառվկյան նկարիչները «Աստվածամոր վերափոխման» կամ «Ննջման» հորինվածքում երթեմն այնպիսի մոտեցում են ցուցաբերում, որոնք հիշեցնում են հայկական արվեստի ավանդույթները: Այդ կապակցությամբ հոդվածագիրը վկալակոչում է նաև միջնադարյան արվեստի նշանավոր գիտակ Պ. Ֆեթերին: Վերջինս առանձին մի ուսումնասիրություն ունի՝ սվիրված հայկական միջավայրում «Աստվածամոր վերափոխման» թեմայի տարրերակներին<sup>23</sup>:

<sup>20</sup> Nicole et Michel Thierry, *Nouvelles églises rupestres de Cappadoce, région du Hasan dagi*, Paris, 1963.

<sup>21</sup> N. Thierry, *Une iconographie inédite de la cène dans un Recetoire rupestre de Cappadoce*, "Revue des Etudes Byzantines", t. 33, Paris, 1975, և այլն:

<sup>22</sup> Հ. Կոտուլյան, *Цист и религиозные житописи Армении*, Ереван, 1978, с. 41.

<sup>23</sup> P. Vetter, *Die armenische Dormitio Mariae*, "Theologische Quartalschrift", 84. 1902, pp. 321-349 (§ 22, p. 344).

Վերոբիշյալ հեղինակներից բացի, Բայերի և Կապադովկիայի արվեստի առնչություններին ամերադարձել են նաև Մ. Ռեյստալը<sup>24</sup>, Ն. Օլկոնոմիդեսը<sup>25</sup>: Ցավոք, նրանց աշխատությունները մեզ մատչելի չեն եղել:

Մեր խոսքը եզրափակենք Եվրոպական մի նշանավոր գիտնականի դիմոդուրյամբ, որն, այսպես ասած, «հակառակ ծայրից» է մոփեցել մեզ հետաքրքրող խնդրին: Դեռևս 1911 թ. Ա. Բաումշտարկը, ծանոթանալով Հայաստանի հարավային շրջանների մանրանկարներին, գրել է: «Դին արևելյան-միջազգերից, նաև Կապադովկիայի շրջանի գեղանկարչության ավանդները, թերևս, ոչ մի գույք այնքան անաղարդ ձևով չեն դրսնորվել, ինչպես Վասպուրականի շրջանի ձեռագրերում: Այդ ձեռագրերի շնորհիվ է, որ XV-XVII դդ. հայկական մանրանկարները կամքջվում են գեղանկարչության հին ավանդների հետ»<sup>26</sup>:

<sup>24</sup> Die Byzantinische Wandmalerei in kleinasiin, B. d. 1-5, pp. 67-74.

<sup>25</sup> L'organisation de la frontiere Orientale de Byzance aux X-e siecle et Taktikon de liscorial, "Rapports", pp. 73-90.

<sup>26</sup> A. Baumschtrck, Eine gruppe illustriertes Armenisches Evangelien bucher des XVII-XVIII, j. in Jerusalem.

Monaishete für kunstwissenschaft, 1911, p. 48.